ՀԱՅԿԱԴԻՏԱԿԱՆ

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱՅԻ ԱՆՏԻՊ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

ԳԱՀԳ

Ցամքած ոսկոր, ո՞ւր է հոգիդ, ինձ ասա,
Շիջած հնոց, ո՞ւր է հուրդ առաջուա.
Վանդակ, ո՞ւր է քու քաղցրախոս թռչունը,
Ինչո՞ւ այդպես նա շուտ թողեց յուր բունը։

Լուռ ես կեցել, ինձ չես տալիս պատասխան,
Քու բերանը մահը կնքեց հավիտյան.
Ս՛իտքըս հեռու, հոգիս խռով, մոլորած,
Քեզ ակնապիշ ես նայում եմ զարհուրած։

Ո՞վ էր արդյոք քու մեջ մեկ օր բնակում.—
Աղբա՞տ, հարո՞ւատ, տե՞ր, ծառա՞, թե կույս սիրուն.
Գիտե՞ր, արդյոք, ինձ անծանոթ քու հոգին,
Ինչպես սիրել, հուսալ կամ լալ դառնագին։

Թե՞ անզգա, ինչպես որ դու ես հիմի,
Ամեն ազնիվ մտածմունքի թշնամի,
Անմարդամոտ, առանձնացած, անօգուտ,
Ագահ, ժլատ, արծաթասեր և անգութ։

Գուցե լիներ նա օրիորդ գեղեցիկ,
Վառ աչերից թափում լիներ սեր գողտրիկ,
Եամ պատանի աղեղ կուսին սիրահար,
Յուր ալևոր ծնողաց միակ միսիթար։

Դու դարձել ես հիմի անշեն անապատ,
Բուն են շինել քու մեջ սողունն ու միջատ.
Անխղճմտանք ծածկել են որդունքը,
Քու ճակատը, քու ծոծրակը, քու քունքը։

Ասա, ո՞ւր են ցոլուն, փայլուն աչերդ,
Ո՞ւր են կարմիր վարդի նման թշերդ.
Գանգուր մազերդ փունջ փունջ ընկած ուսերիդ,
Հետքը անգամ չեն մնացել պեխերիդ։

Կանցնի վերադ քանի տարի, ո՞վ գիտե,
Այդ կմախքն էլ, գուցե, մի մարդ չի գտնի.
Դու բնության օրենքին չես դիմանալ,
Թե ուշ, թե վաղ անշուշտ պետք է հող դառնալ։

Բայց դու ասա, ո՞ւր է հոգիդ, ո՞ւր թռավ,
Կա՞ նա այժմ, թէ... Նա էլ քեզ հետ մեռավ...
Բայց դու լուռ ես, ինձ չես տալիս պատասխան,
Քու բերանը մահը կնքեց հավիտյան։

1854 սեպտեմբ. 25, Մոսկվա.

Այս բանաստեղծությունը մենք հանել ենք մեր մի տակավին ձեռագիր մնացած աշխատասիրությունից, որ ունի «Ռաֆայել Պատկանյանի վաղեմի բանաստեղծությունների քննական ուսումնասիրության մի փորձ» խորագիրը։

Բանաստեղծությունը գրված է 1854 թվին, ստորագրություն չունի, բայց մենք հիշյալ ուսումնասիրության մեջ դրա վերաբերմամբ եկել ենք այն եզրակացության, որ ի նկատի առնելով լեզուն և գրելու եղանակը, այդ 54 թվին կարող էր գրած լինել միայն Պատկանյանը։ Իսկ որ դա մինչև օրս տպագրված չի եղել, այդ երևում է այն հանգամանքից, որ դա մտած չէ և բանաստեղծի լիակատար համարված տիկին Վարվառի Քանանյանի Գրիգոր Խալաթյանի խմբագրությամբ եղած հրատարակության մեջ։ Պետք է կարծել, որ Խալաթյանին էլ հայտնի չի եղել դա. մենք էլ գտել ենք այդ մի աշուղական տետրակում, որ նվիրել է մեզ մեր բարեկամ Գրիգոր Շերմազանյանը։ Տետրակի մեջ գտնվում են հատկապես Պատկանյանի «Աշուղ Կարապետ» կեղծ ստորագրությամբ գրած բանաստեղծությունները։

Ն. ՇԱՀԱԶԻԶ